

ՀՏԴ 796.011.2

DOI: 10.53068/25792997-2024.3.13-63

ԿՐՈՆԸ ԵՎ ՀՈԳԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՍՊՈՐՏՈՒՄ ԵՎ ԿԱՐԱՏԵԴՈՅՈՒՄ.

ԱԶԳԱՅԻՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԱՅՍ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ

Ա. Ս. Ղարախանյան

Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ, Երևան, Հայաստան

Առանցքային բառեր: Հոգևորություն, կրոն, սպորտ, մշակույթ, հոգևոր մղում, հավատք, կարատեի դաստիարակչական ազգային համակարգ, գաղափարախոսություն, արժեք:

Հետազոտության արդիականություն: Հոգևորություն տերմինը բարդ հասկացություն է, որի բովանդակությունը փոխվում է՝ ըստ մշակութային, կրոնական և ակադեմիական ծագման: Մի շարք հետազոտողներ կարծում են, որ հոգևորություն տերմինն իր իմաստային և հայեցակարգային կողմերով համընկնում է դրական հույզերի և կրոնի հասկացության հետ: [4]: Սակայն, մեր համոզմամբ, այս երկու հասկացություններից մեկը՝ դրական հույզերը, կախված դրանց ծագման աղբյուրից, (մեր ներքին երկխոսության մեջ) կարող է հոգևորության հետ որևէ աղերս չունենալ և էապես չարտահայտել հոգևոր վերաբերմունք կամ արձագանք, ինչպես բարեկեցության վերաբերյալ սուբյեկտիվ դատողությունները, իսկ կրոն հասկացությունը՝ որպես գիտակցության ձև, աշխարհայացք է և բացառապես հիմնված է հոգևորի և աստվածությունների նկատմամբ ունեցած հավատքի վրա: «Հոգևորություն» տերմինը պետք է

դիտարկել որպես ժամանակակից կրթության գաղափարական հայեցակարգ այն մտավոր հասկացություն է և որոշիչ դեր ունի կյանքի ընտրության համար, որը գնահատվում է գերազույն արժեքներով և արտահայտվում համոզմունքներում, վերաբերմունքի և գործողության մեջ: Յուրաքանչյուր մարդ ունի հոգևորություն քանի դեռ նա ունի հավատքով արտահայտված համոզմունքներ: Այսինքն՝ հոգևորությունը գտնվում է հավատքի ղրորտում և նրա համար ապացուցողական պատասխաններ գոյություն չունեն: Այն «ես»-ից դուրս հավատքի լայն հասկացություն է և ձգտում է հավատքով էլ պատասխանել կյանքի իմաստաբանական և գոյաբանական անապացուցելի բոլոր հարցերին: Հոգևորությունը ենթադրում է մշակութային և կրոնական պատկանելիություն, որով անձը նույնականոնում է այդ հոգևորությունը ներշնչող արժեքներով: Հետևաբար, կարատեդոյում և սպորտում արտահայտված հոգևորությունը ևս նույնական է այն կրոնի ներաշխարհին և հոգևոր պատկանելիությանը: Կարատեդոյում հոգևորությունը ձևավորվում է «դո»-ի համակարգային կրոնափիլիսոփայական

դրույթներով, որն ամրագրված է կարատեոլոյի հենց անվանման մեջ՝ կողավորելով նրա ողջ հոգևոր-մշակութային բովանդակությունը:

Քենեթ Պարգամենտը հոգևորությունը սահմանել է որպես «սրբազան տիրույթ», որը վերաբերում է «Աստծո, բարձր ուժերի, աստվածության և տրանսցենդենտ իրականության գաղափարներին» [7]: Հոգևորությունն այն գործելու միջավայրն է, որը կյանքում, ինչպես նաև սպորտում մարդուն կարող է առաջ մղել բարձրագույն նպատակների, որի ներգործության հիմնական աղբյուրը կրոնն է: Ինչպես Նեդեհեն է ասում. «Անկրոն էակը հրաշունչ զինվոր չի կարող դառնալ»: Հոգևոր համոզմունքներով ձևավորված արժեքներն են, որ ազգերին և ժողովուրդներին միաբան և ավելի կենսունակ են դարձրել: Հոգևորությունը կրոնի արտահայտություն է, և ոմանք մտածում են, որ հոգևորությունը սահմանումից դուրս է, և նրա ընկալումները ոչ նմանական: Այս վերաբերմունքի պատճառը պայմանավորված է տարբեր մշակութային և կրոնական հայեցողությամբ, ինչպես օրինակ՝ քրիստոնյաները հոգևորությունը հասկանում են՝ որպես սուրբ հոգու ներգործություն, մինչդեռ մահմեդականների համար հոգևորությունը ուղղություն է դեպի իմաստի ավելի խորը ըմբռնումներ, հրեաները հոգևորությունը կարող են զգալ Աստծո հետ իրենց կատարած ուխտի հարաբերություններում, իսկ բուդդայական հոգևորությունը վերաբերվում է

տառապանքների ավարտին՝ լուսավոր ըմբռնման միջոցով: Ինչպես երևում է բոլոր դեպքերում, հոգևորությունը վերաբերում է տրանսցենդենտի հետ կապին կամ հարաբերություններին, որտեղ սրբության տարրը կրոնի կենտրոնական կետն է, որի գոյությունն ու իսկությունը առանցքային է հոգևորության համար, որոնք բնութագրվում են մարդկային կյանքի բարձր իդեալներով և գաղափարներով:

Ապրելու և գործելու հանունների կոնցեպտը (հանուն ինչի), պայմանավորված հավատքով, սպորտում և կյանքում կարող է բերել արդյունքների աննախադեպ աճի: Հոգևոր մղումներով պայմանավորված մարդկային իդեալների և մարզական բարձր արդյունքների ձեռքբերման համար մեծապես կարևոր է, որ այդ ակտիվությունը սպորտում իրագործվի ինքնազերազանցման և ինքնահաղթահարման ճանապարհով և այդ ոգևորության ամենագոր ուժը թաքնված է հոգևոր ինքնաճանաչողության և հավատքի մեջ: Ուստի, կրոնը և հոգևորությունը պայմանավորված հավատքով մարզիկներին կարող է առաջ մղել դեպի սպորտային բարձր արդյունքներ՝ որպես նվիրագործություն, հանուն ազգի և եկեղեցու: Այսպիսի մղումներով արտահայտված ձեռքբերումները մեծապես կարող են ծառայել ազգին և պետությանը, բայց ոչ Հեգելյան այն պնդմամբ, որ մարդիկ պատմության գործիքներ են, որոնցից թաքցվում է պատմության իմաստը [3] այլ հոգևոր

բարձր գիտակցությամբ և առաքինությամբ, որով կարտահայտվի մարդկային նվիրագործ հոգևորությունը: Հայեցողական այս տարբեր ըմբռնումներով և խորը վերլուծական մտքի լուսավորությամբ փորձենք սպորտում, կարատեդոյում և ամենուր պահպանել հայ քրիստոնյաներիս համար մեր հոգևոր ներգործության միակ աղբյուրը՝ քրիստոնեական հավատքը, և նրա սրբության տարրը հանդիսացող մեր առաքելական սուրբ եկեղեցին:

Այս շեշտադրումով էլ ներկայացված է սույն հետազոտության արդիականությունը, որով պայմանավորված է հայ մարզիկների հոգևորությունը սպորտային բարձր ձգտումներով:

Հետազոտության նպատակն է՝ քրիստոնեական հավատքով և իդեալներով սահմանել և կարևորել՝ կարատեիստ հայ մրզիկների սպորտային բարձր արդյունքների և հոգևոր ճշմարտության ձեռքբերման ազգային ուղին՝ որպես հայկական հոգևորության և ինքնության արտահայտիչ:

Հետազոտության խնդիրներն են.

1. Հայ կարատեիստների մոտ ներքին մտավոր զննությամբ ձևավորել վերաբերմունք մի շարք կրոնների և դավանաբանական հայացքների վերաբերյալ:

2. Քրիստոնեական հոգևորությունը դիտարկել՝ որպես հայ կարատեիստների գործունեության գլխավոր առաջնորդություն:

3. Ձևավորել կարատեի ազգային-դաստիարակչական համակարգի վերաբերյալ անհրաժեշտ պատկերացումներ:

Հետազոտության մեթոդները և կազմակերպումը: Կիրառվել են հետազոտության հետևյալ մեթոդները՝ գիտամեթոդական գրականության ուսումնասիրում և վերլուծում, մանկավարժական դիտումներ, զրույց:

Հետազոտության արդյունքների վերլուծություն: Սպորտային գործունեության պատմական ընթացքը գնահատելիս հասկանում ենք, որ հնագույն քաղաքակրթություններում այն իրագործվել է կրոնական պաշտամունքային սովորությունների շրջանակներում և հանդիսացել է ժամանակի սուրբ ավանդույթի մի մասը:

Դեռևս Հոմերոսի ժամանակներում կրոնական ծեսերի նվիրագործության և այդ հոգևորության արտահայտման արդյունքում ի հայտ եկան տարբեր մրցաշարեր և ձևավորվեցին այնպիսի մարզաձևեր ինչպիսիք են բոնցքամարտը (պիզմաչիա), պալեն (հին հունական ըմբշամարտի ձև), պանկրատիոնը (բաղկացած էր պիզմաչիայի և պալեի տարրերից), վազքը, սկավառակի նետումը, նետաձգությունը, նիզակի նետումը և այլն, որոնց միջոցով հին օլիմպիական խաղերում ցուցադրվում էին հույների կրոնական փորձառությանները նվիրված Ձևսին: Համահեղինակական մյուս խաղերը ևս ունեին կրոնական և հոգևորություն արտահայտող յուրահատուկ շրջանակ.

Դելֆիում կազմակերպվել էին Պյուֆիական խաղերը՝ ի հիշատակ Ապոլոնի վիշապի նկատմամբ տարած հաղթանակի, Իսթմիական խաղերը Կորնթոսում փոխկապված էին Պոսեյդոնի պաշտամունքի հետ, իսկ Նեմեայի խաղերը կատարվում էին ի պատիվ Զևսի: Սխայված չենք լինի եթե ասենք, որ գործնականում մարդուներքին կարողությունները բացահայտելու ամենազդեցիկ և արդյունավետ ճանապարհը դեռ վաղ ժամանակներից հանդիսացել է հոգևորությունը, որի հիմքը եղել է կրոնը և հավատքը: Կուբերտենը անգամ համոզված էր, որ հնարավոր է օլիմպիզմը նույնականացնել կրոնի հետ, ինչպես վկայում է նրա «religio athletae» տերմինը, որը հիմք դարձավ «Մկանային քրիստոնեություն» շարժմանը: Պատմությանը նաև հայտնի է, որ Ամերիկայի նախագահ Թեոդոր Ռուզվելտը մեծացել է մի ընտանիքում, որտեղ դավանում էին «մկանային քրիստոնեություն», և ինքն էլ հանդիսանում էր այդ ուսմունքի ակնառու հետևորդներից մեկը [1]: Սակայն «մկանային քրիստոնեություն»-ը կրոնական ուղղություն ընկալելու այս երևույթը հանգեցնում է քրիստոնեական դավանաբանության խեղաթյուրման և աղանդավորական չարիքի: Այլ բան է, որ սպորտը կարող է աջակցել կրոնին և կարող է անգամ հանդես գալ որպես աստվածային առաքինությունների և բարձր արժեքների ներկայացման հարթակ, որտեղ հավատքն ու քաջությունը միախառնվում են

հանուն հուսացած հաղթանակի: Այս համատեքստում, եթե փորձենք կողավորել «առողջ հոգի՝ առողջ մարմնում» Պլատոնյան հայտնի բանաձևը հայ մարզիկների ինքնության առնչությամբ, կստացվի՝ անհրաժեշտ է ունենալ հայկական առաքինագործ ոգի և այն կրելու համար արժանավոր մարմին, որը պատյանն է մեր ոգու: Հոգևորությունը սպորտում այն աներևույթ և զորեղ ուժն է, որ գոտեպնդում է մարզիկին և հաղթանակի հավատքով առաջ մղում, իսկ մարմինը նրա ֆիզիկական արտահայտության միջոցը՝ մրցումներում ներկայանալու շարժողական հմտություններով: Եթե մարմնի ֆիզիկական որակները տեսանելի են, և դրա կարողությունները՝ չափելի, ապա ոգին, որը շարժում է մեր մարմինը, աներևույթ է և նրա ուժը անսահմանելի, և եթե մարմինը պետք է մարզել, և նրա խնամքը կարևոր է ժամանակավոր հաղթանակների համար, ուրեմն որքան առավել պետք է կարևորել ոքու խնամքը, որը իմաստ է փնտրում կյանքի գրեթե բոլոր շարժումներում, հավերժության հաղթանակի և ազգապատկան ինքնության համար:

Հետևաբար, հոգևորությունը գործնականում կարող է հասնել այնպի սպորտային արդյունքների, որքանով սպորտը կարող է իմաստ փնտրել հոգևոր գիտակցության մեջ:

Ի վերջո կարատեդոյում ևս գլխավոր շեշտադրումը արված է հենց նրա հոգևոր

ասպեկտի՝ «դո»-ի վրա, որով արտահայտված է նրա ողջ էությունը և հոգևոր ճանապարհը: Հետևաբար, սպորտում, մասնավորապես Հայաստանյան կարատեդոյում ևս անչափ մեծ և կարևոր է հոգևորության դերը որպես գործունեությանը իմաստ և ուժ հաղորդելու անհրաժեշտություն:

Հոգևորության վերաբերյալ մարդաբանական և աստվածաբանական մշակույթային պատկերացումները ֆիզիկական դաստիարակության մեջ և սպորտում.

Իսլամում հոգևորությունը նշանակում է Աստծուն ակնածանք և երկրպագություն բոլոր հարցերում և շարժումներում՝ Աստծո իրավահաջորդությունը երկրի վրա ձեռք բերելու համար [2]: Իսլամական իրավագիտության ավանդական տեսությունը, որը կարգավորում է մահմեդականների հասարակական կյանքը, իրենից ներկայացնում է հոգևորության հանդեպ կանոնական կարգապահություն, որը ճանաչում է շարիա աստվածային օրենքները: Շարիաթը իսլամական իրավագիտության մեջ կողավորում և մեկնաբանում է Ղուրանում ամրագրված էթիկական սկզբունքները և ապահովում իսլամական սահմանադրական մոդելը՝ սահմանելով իր բարոյական և իրավական առաջնորդությունը կյանքի գրեթե բոլոր ասպարեզներում՝ ընտանեկան և սոցիալական նորմատիվ կարգավորումներից մինչև սպորտ և քրեա-

կան պատասխանատվություն: Մահմեդականների հոգևորության նվիրական զգացումը և Աստծո հանդեպ ունեցած ակնածանքը անգամ կարող է արտահայտվել «ջիհադով», որը իսլամական օրենսդրությամբ թույլատրելի պատերազմի ձև է՝ ուղղված այն երևույթների դեմ որոնք վնասում են իրենց կրոնը և մահմեդական հասարակությանը [5]: Պայքարի այս ձևը մահմեդականներից պահանջում է ֆիզիկական բարձ պատրաստվածություն, որը իսլամում անշուշտ խրախուսվել է: Դա է վկայում Ղուրանում և իսլամական տարբեր գրական աղբյուրներում այն նկարագրությունները, որտեղ Մուհամեդ մարգարեն մասնակցել կամ խրախուսել է մի շարք մարզական գործունեություններ, ինչպիսիք են են լողը, նետաձգությունը, ուղտերի մրցավազքը, ձիավարությունը, մրցավազքը, ըմբշամարտը և այլն, որի գործունեությունը արտահայտվել է իսլամական օրենքներով և նրան բնորոշ ոգևորությամբ: Նետաձգությունը, ինչպես նաև ռազմական նշանակություն ունեցող այլ մարզաձևերը, համարվել է արդյունավետ գործիք «Ջեհադ» իրականացնելու համար: Հարկ է նշել, որ Մուհամեդ մարգարեն ասել է, որ պարզևներ են սպասվում երեք բանի համար՝ ուղտերի մրցավազքի, ձիավարության և նետաձգության, քանի որ սրանք «Ջեհադ»-ի հմտություններ են: Իր հոգևորության համատեքստում Իսլամը շեշտադրում է ֆիզիկական դաստիարակության կարևորությունը՝ որպես մարդու կարևոր ձեռքբերում, որը

Ղուրանի և հաղիսների տարբեր հատվածներում մուսուլմաններին կոչ է արվում զբաղվել ֆիզիկական ակտիվությամբ: Ըստ իսլամի՝ մարդիկ կարող են հաղթահարել իրենց շրջապատի ցանկացած մարտահրավեր, եթե նրանք գտնվում են բարձր ֆիզիկական պատրաստվածության մեջ: Հաղիսում մենք կարդում ենք. «Ուժեղ հավատացյալը Ալլահի համար ավելի լավ և սիրելի է, քան թույլը»: Ինչպես նաև հայտնի է դառնում, որ Մուհամեդ մարգարեն տիրապետել է ըմբշամարտի հնարքներին և Ռուկանա բին Աբդուլյազիդի հետ պայքարում դարձել է հաղթող: Մեր օրերում ևս շարիաթի հոգևոր պատասխանատվությունը իր հետևորդներից պահանջում է նպատակի ուժեղ զգացում, հաստատական վճռականություն և հոգևորություն՝ ինչպես սպորտում, այնպես էլ կյանքի բոլոր ասպարեզներում:

Հուդայականության առաջին բաղադրիչը ուխտն է: Հրեական հուդայականությունը մովսեսական ուխտը պահելու մեջ է, որը հաստատվել է Աստծո և իրենց նախնիների միջև [6]: Հրեաները կարող են նաև ուխտի գալ սեփական ժողովրդի հետ հարաբերություններում: Աստված Մովսեսի միջոցով Սինա լեռան վրա հրեա ժողովրդին տվեց Թորան՝ Մովսեսի հինգ գրքերը, որը հանդիսանում է Հուդայականության հիմնական Աստվածաշունչը: Բացի բնօրինակ գրավոր թորայից, հետագայում ավելի ուշ

կազմվեց ռաբիական գրառումների հավաքածուն՝ Թալմուդը, որը եբրայերեն նշանակում է «ուսմունք», կոչված այն գաղափարին, որ «ողջ հրեա ժողովուրդը պատասխանատու է միմյանց համար»: Թալմուդը կրոնական, կենցաղային, իրավական կանոնների ու պատվիրանների ժողովածու է, այն ծառայում է որպես հրեական մտքի և ձգտումների «առօրյա կյանքի ուղեցույց»: Թորայում գրված է, որ Աստված հրեա ժողովրդին խոստացավ Քանանի երկիրը, որի արդյունքում էլ ձևավորվեց հավատք առ այն, որ հրեա ժողովուրդն ունի ինքնորոշման ազգային իրավունք՝ որպես սեփական ազգ: Այս գաղափարախոսությունը, որն արդեն կրում էր հազարամյակների վաղեմություն՝ հիմք հանդիսացավ «սյունիզմի» ձևավորմանը՝ որպես քաղաքական գաղափարախոսություն՝ Սիոն լեռան մոտ «հրեական պետություն» ստեղծելու պահանջով: Սիոնիստները ոչ մի կրոնական և քաղաքական և ֆիզիկական ջանք չխնայեցին, որպեսզի հազարավոր հրեաների ամբողջ աշխարհից վերադարձնեն իրենց պատմական հայրենիքը և Իսրայելը հռչակեն որպես անկախ պետություն և հրեական ինքնության կենտրոն: Այսօրինակ մարտահրավերներում հաղթանակների հասնելու համար, անշուշտ, հրեա հասարակությունից պահանջվել է ֆիզիկական մեծ ջանք և հոգևորություն: Ռաբբի Ավրահամ Յիցհակ Կուկը, ով հրեա ժողովրդի մեծագույն հեղինակություն էր և հանդիսանում էր

Երուսաղեմի Աշքենագի, ինչպես նաև հետագայում՝ Պաղեստինի Աշքենագի գլխավոր ուսուցիչ, Orot HaTechiya 34-րդ գլխում իսրայելցի երիտասարդներին բացահայտորեն խրախուսում է ֆիզիկապես ուժեղանալ դեռևս այն ժամանակ ապագա հրեական պետության կերտելու համար, ինչպես նաև գրում է. «Երբ երիտասարդները սպորտով են զբաղվում իրենց մարմիններն ու հոգիները ուժեղացնելու համար, ավելի ուժեղ ազգ լինելու բարօրության համար, այս սուրբ գործը բարձրացնում է Աստվածային նախախնամությունը նույնքան, որքան Դավիթ թագավորի երգերը»: Նա շարունակում է. «Մեր ֆիզիկական պահանջը մեծ է: Մեզ պետք է առողջ մարմին: Մենք շատ գործ ունենք հոգևորության հետ, մենք մոռացանք մարմնի սրբությունը, մենք անտեսել ենք ֆիզիկական առողջությունն ու ուժը, մենք մոռացանք, որ սուրբ մարմին ունենք ոչ պակաս, քան սուրբ հոգին...» [9]: Հուդդայականության ևս մեկ ալ նշանավոր կերպար՝ Մովսես Մայմոնիդեսը, մի ամբողջ գլուխ նվիրեց ֆիզիկական առողջությանը և հոգևորությանը իր մեծ գործի՝ *Միշնե Թորայում*, որտեղ գրում է. «Մարմինը առողջ և առույգ պահելով՝ քայլում ես Աստծո ճանապարհով... մարդու պարտականությունն է խուսափել այն ամենից, ինչը վնասում է մարմնին և զարգացնել սովորություններ, որոնք նպաստում են առողջությանն ու առույգությանը»: Հրեա

հասարակության մեջ սպորտային ամենամեծ շարժումը սկսվեց 1929 թվականին, երբ ստեղծվեց «Մաքքաբի» միջազգային հրեական սպորտային կազմակերպությունը: Սիոնիստները վերցրել էին այս անունը, քանի որ մակաբայականները հրեա հերոսներ էին, որոնք կռվում էին անկախության համար և որոնց օրինակը ուսուցողական էր երիտասարդ հրեաների համար: Սիոնիստական երիտասարդական այս շարժումը կենտրոնացավ Մաքս Նորդաուի (բժիշկ, գրող, քաղաքական գործիչ և համաշխարհային սիոնիստական կազմակերպության համահիմնադիր) «մկանային հուդայականություն» գաղափարախոսության վրա՝ սպորտը և հուդդայական հոգևորությունը միախառնելով իրար:

Բուդդայականությունը հիմնված է անձի հոգևոր զարգացման վրա: Բուդդիզմը, հատկապես Արևելյան Ասիայի երկրներում, հոգևոր մշակութային առումով գրեթե նույնացված է կոնֆուցիականության և դաոիզմի հետ՝ որպես իրար լրացնող գաղափարախոսություններ: Ըստ գիտական աղբյուրների Կոնֆուցիականությունը, բուդդիզմը և դաոիզմը՝ որպես փիլիսոփայական գաղափարախոսություններ, եղել են այն երեք ամենահայտնի ուղղությունները, որոնք գիտնականները լայնորեն մեջբերումներ են կատարում, երբ փորձում են հասկանալ արևելյան ասիացիների յուրահատուկ աշխարհայացքը և վարվեցողությունը: Սակայն հարկ է նշել նաև, որ դաոսիզմը,

բուդդիզմը և կոնֆուցիականությունը ոչ միայն տարբեր են հայեցակարգային և մետաֆիզիկական մակարդակներում, այլև կիրառվում են առօրյա կյանքում շատ տարբեր ձևերով և միավորվում ամբողջապես: Օրինակ՝ կոնֆուցիականությունը հիմնականում կառավարում է սոցիալական համակարգի կառուցվածքը և բարոյական պահանջների չափանիշները և սոցիալականացման և արտաքին չափանիշների աղբյուր է, իսկ բուդդիզմը և դաոիզմը հիմնականում առաջարկում են դիմակայելու և աջակցության ճանապարհներ: Բուդդայականության մեջ, երբ խոսքը վերաբերում է ֆիզիկական դաստիարակության մեջ կամ սպորտում հոգևորության բացահայտմանը, մեր առջև դրված խնդիրը դառնում է առավել պարզ և հանգամանալի, քանի որ խնդրի պատասխանը ինքնին արևելյան մարտարվեստներն են, որոնց փիլիսոփայությունը այնպես է միահյուսված բուդդիզմին, որ մեկի լիարժեք ըմբռնումը պայմանավորված է մյուսի իմացությամբ: Այդ արմատական կապը նկատվում է հենց առաջին հայացքից՝ արևելյան մարտարվեստների անվանման մեջ ամրագրված «դո» մասնիկով, որն արտահայտում է նրա ողջ էությունը և հոգևորությունը: Սխալված չենք լինի եթե ասենք, որ մարտարվեստը պարզապես միջոց կամ հոգևոր պրակտիկայի անոթ է հմուտ գործողություններով սահմանված ճանապարհին անցնելու համար, իսկ մրցակ-

ցային Բուդդան վարպետության, առաջնորդության և հոգևորության մասին է [10]: Ըստ բուդդիզմի՝ մարդկային ողջ գոյությունը լցված է տառապանքով, որից կարելի է ենթադրել, որ ֆիզիկական պատրաստվածությունը անհրաժեշտություն է այդ մարտահրավերներին դիմակայելու համար: Բուդդայական գաղափարախոսությունը կյանքի էությունը սահմանում է տառապանքի իր հայեցակարգից՝ հաստատելով նրանում տեղի ունեցող աստիճանական փոփոխությունների հաջորդականությունը: Եթե զուգահեռաբար այս գաղափարը դիտարկենք արևելյան մարտարվեստների, ինչպես նաև կարատեդոյի պարագայում կնկատենք, որ տառապանքները և դժվարությունները այստեղ ևս մեծ են, որոնք լցված են զգացմունքային և հոգեբանական յուրահատկություններով, ինչպես նաև աստիճանական փոփոխությունների հաջորդականությամբ և հասունացմամբ: Եվ հոգևոր այս ազդակը առաջնորդում է որպես մարդկային մտքի հրամայական, որով ֆիզիկական և հոգևոր կատարելագործումը դառնում է որպես ներքին հոգևորություն արտահայտող խորաթափանց և անքննին աներևույթ մի բան: Թեև ցանկալի է պարզ տրամաբանությամբ բնութագրել և հասկանալ այս հոգևորության դիմագիծը, սակայն արևելյան մարտարվեստներում, ինչպես նաև կարատեդոյում հոգևորության բնույթը միանշանակ նկարագրելը անհնար է ինչպես Տաո Թե Չինգում Լաո Ցզին է

ասում. «Անունը, որը կարելի է նկարագրել, մնայուն ու անփոփոխ Տաոն չէ» [11]: Պարզապես այն տառ է և այն պետք է ներքնապես զգալ՝ առանց խոսքերի:

Ինչպես տեսնում ենք հոգևորությունը ունի ինքնություն և ազգային պատկանելիություն:

Անկախ այն հանգամանքից, թե մարդիկ ինչ կրոնական պատկանելիություն են կրում, միևնույն է բոլորը հավատքի միջոցով ակնկալում են մխիթարություն և փրկություն՝ բախվելով միևնույն էկզիստենցիալ իրավիճակին, որտեղ մահը սպառնում է մարդու «գոյությանը», իսկ մարդը հոգևորությամբ, աստվածահաճո գործերով և ինքնակատարելագործման ճանապարհով ձգտում է ազատագրվել այդ «սահմանափակությունից»:

Կրոնի և հոգևորության ներկայությունը սպորտում պետք է դիտարկել որպես դրական աճի և հոգեբանական պատրաստվածության լավագույն միջոց: Հոգևորությունը և հոգևոր ազդակը ի հայտ է գալիս որպես մարդկային հիմնարար հրամայական, և դրա կատարելագործումն ու մշակումը սպորտում՝ որպես ներքին պատրաստականության և մոտիվացիայի աղբյուր, մարզիկին կարող է մղել բանական գործողության, որի ծագումը արմատապես կրոնական է: Սպորտում հոգևորությունը կենտրոնացած է միաստիկ փորձառությունների վրա արտահայտված անձի սեփական հավատքով և կրոնական համոզմունքներով:

Աղոթքը սպորտում հաճախ ամենատեսանելի հոգևորության արտահայտման ձևն է, որը կիրառվում է անորոշ և բարդ իրավիճակներում՝ հասցեագրված նյարդայնության և անհանգստության դեմ՝ հանուն պայքարի և հուսացած հաղթանակի: Միաստվածական կրոնական փորձառության մեջ (քրիստոնեություն, իսլամ և հուդայականություն) մարզիկները իրենց աղոթքը ուղղում են Աստծուն, մինչդեռ բուդդայականության, դաոսականության հոգևորության հետևորդները, օգտագործում են մեդիտացիայի հատուկ տեխնիկա, որը հատկանշական է ինչպես կարատեին, այնպես էլ արևելյան մյուս մարտարվեստներին:

Կրոնական այս համակարգերը, իհարկե, բախտորոշ դեր են խաղացել ազգերի և ժողովուրդների ճակատագրերում՝ ուժ և հոգևորություն հաղորդելով և նրանց պատմության քառուղիներում դարձնելով ավելի կենսունակ: Սակայն, կա մի շատ կարևոր հարց, որն էապես կարող է ազդել ոգևորության ուժի և ազդեցության վրա, և այդ ուժը բացարձակ համոզմունքն է այն գաղափարին, որին ծառայում են տվյալ ազգերը և ժողովուրդները՝ պահպանելով իրենց հոգևոր ինքնությունը:

Ելնելով մեր հետազոտության առարկայի ուսումնասիրություններից՝ հոգևորության և նրա ազդեցության ուժի վերաբերյալ մեր առաջադրված խնդիրներից, այստեղ կարևոր է հասկանալ՝ արդյոք այս համակարգերը պահպանել են իրենց

հոգևորության աստվածաբանական արժանահավատությունը սպորտում և ժամանակակից կյանքում: Մխաված չենք լինի, եթե ասենք, որ հատկապես պետական քարոզչական մակարդակներում կրոնական այս հոգևորությունները գրեթե կորցրել են իրենց աստվածաբանական պատկանելիությունը: Երբևէ հետաքրքրել է մեզ՝ տարբերվում է արդյոք իսլամը իսլամիզմից, հուդայականությունը՝ հուդիզմից, բուդդայականությունը՝ բուդդիզմից: Առաջինները, իհարկե, կրոններ են, մինչդեռ վերջիններս «իզմները»՝ արմատական քաղաքական ծրագրեր և կանոնակարգեր, որոնք ուղղված են հասարակության վերափոխմանը՝ հանուն կառավարման և պետական շահերի, որոնք իրագործվում են հատուկ մշակված դաստիարակչական համակարգերի և իրավական լծակների օգնությամբ: Սակայն մշակույթների այսօրինակ հարցերի համատեքստում բովանդակային առումով կրոնների վերլուծությունները չեն հանդիսանում մեր քննության առարկա, ուստի միայն մեր ուսումնասիրության շրջանակներում հայ մարզիկների մոտ կարատեում և սպորտում հոգևոր ինքնության մեջ կողմնորոշվելու համար անհրաժեշտ են համարում ընդգծել, որ այս համակարգերում միայն քրիստոնեությունն է, որ չի ածանցվում «իզմներով» և ենթարկվում այդօրինակ քաղաքականացված ձևափոխումների: Իհարկե, այս երևույթը չպետք է շփոթել աղանդավորական շարժումների հետ, որոնք

առկա են գրեթե բոլոր կրոններում, քանի որ նրանց հերձվածողական պնդումները միայն աստվածաբանական են:

Համաձայն Օգոստինոսի «Մարդու ժամանակավոր քաղաքը և Աստծո քաղաքը» հայտնի մոդելի՝ հավատքն ու քաղաքականությունը բաժանելի ոլորտներ են: Սակայն, այստեղ խոսքը չի կարող վերաբերվել պետական քաղաքական, ռազմավարական այն ծրագրերին, որոնց նշանակությունը ամենևին էլ կրոնը «իզմներով» քաղաքականացնելը և իրեն ծառայեցնելը չէ, այլ աջակցումն է այն հոգևոր արժեքներին, որոնք պատկանում են տվյալ ազգի մշակույթին: Հետևաբար, երևույթի իսկությունը կայանում է նրանում, որ քաղաքական գաղափարախոսությանը և ծրագրերին հոգևորություն հաղորդելով՝ գաղափարը վեհացվում է՝ դառնալով առավել գերակա և անառարկելի, քանի դեռ արժանահավատ է և չի բացահայտվել նրա ողջ էությունը: Քաղաքականությանը հուզական կշիռ և հազևորություն հաղորդելու համար, չի կարելի կրոնը օգտագործել որպես «քաղաքական վարդապետություն»՝ որովհետև, երբ կրոնը դառնում է քարոզչական գործիք, իսկ քաղաքականությունը՝ կառավարող համակարգ երևույթի վերաբերյալ հավատքի և վստահության բացակայության պատճառով մարդու մոտ տեղի է ունենում ներքին խզում և անհամաձայնություն, որը հանգեցնում է «հոգևոր ճգնաժամի», որովհետև կրոնը աստվա-

ծային է և բացարձակ, և այն չի կարող ծառայել քաղաքականությանը և մարդկային սահմանափակումներին: Ամենավեհ գաղափարախոսություններն անգամ, որոնք մարդկային ձևակերպումներ են՝ մարդկային միտքը սահմանափակում է գաղափարախոսության շրջանակներում, աշխարհը ընկալելու իր ինքնատիպությամբ, որովհետև աշխարհի ընկալումը ոչ թե նրա տեսանելի գոյություն մեջ է, այլ՝ մարդկային ձգտումների: Ըստ դոկտոր Սթիվեն Քոլվեյի՝ «Մենք աշխարհը տեսնում ենք ոչ թե այնպիսին, ինչպիսին այն կա, այլ այնպիսին, ինչպիսին մենք ենք ուզում այն տեսնել» [8]: Հետևաբար, եթե գաղափարախոսության և մարդկային ձգտումների մեջ չկա հոգևոր իմաստավորում կամ աստվածաբանական խորություն, այն չի կարող լինել բացարձակ և մի օր նրա սպառողական պահանջները կավարտվեն, որովհետև այն, ինչ ստեղծված է ժամանակների համար և պատկանում է ժամանակներին, չի կարող լինել հարատև, և ժամանակիների մեջ էլ այն կանհետանա, իսկ հոգևորությունը վերաբերում է հավերժին՝ Աստվածային ճշմարտությանը: Հիշենք Խորհրդային Միության հզոր համակարգը, որը ստեղծվել էր կոմունիստական «անկոտրուն» գաղափարապոսությամբ և միլիոնավոր կյանքերի գնով չզոյատևեց անգամ մեկ դար: Հոգևոր գիտակցության մեջ մարդկային փնտրումը առ Աստված կամ գերբնականը ողջված է փրկությանը:

Միայն թե այս ճանապարհը յուրաքանչ-յուրի համար, կախված հավատքից, ուրվագծվում է ներքին համաձայնությամբ, և այն կարող է լինել տարբեր միջոցներով և շնորհներով, այդ թվում՝ և սպորտով, որպես արտաքինը ներքին աշխարհին կապող կամուրջ, որը պետք է ծառայեցնել Աստուծուն կամ հավատքին, և նրա սրբության տարրը հանդիսացող մեզ նախախնամությամբ տրված ժառանգությանը՝ հայրենիքին, որի վրա պետք է եկեղեցիանա սեփական ազգը:

Այսպիսով՝ կյանքի իմաստի փնտրումը, ինչպես բոլոր կրոններում, հանդիսանում է մարդու գոյությունը իմաստավորելու ամենաառանցքային դրույթը: Այսպիսի համոզմունքները, ի տարբերություն քաղաքական ձգտումների, ձևավորվում է ներքին համաձայնությամբ և աշխարհի մասին գոյաբանական սուբեկտիվ ընկալումներով, որը հաստատվում է այդ ներքին համաձայնեցված իրականության հավատքով և ճշմարտություններով, որոնցով ձևավորվում են մեր բարձրագույն արժեքները: Կարատեի հոգևորությունը ևս իմաստ է փնտրում սպորտային գործունեության մեջ, և նրա կապը կարատեի կրոնական գաղափարների հետ մշտապես պաշտպանվում է հոգևոր ավանդույթներով: Այս հատուկ կարգապահությունը բխում է ճապոնական մշակույթի կրոնական հայացքներից, որով պայմանավորված է կարատեի օրգանական կապը մասնավորապես բուդոյայակա-

նության հետ: Մարզական փոխաբերությունները այստեղ օգտագործվում և գնահատվում են առավելապես հոգևոր տեսանկյունից, քանի որ սպորտը դիտարկվում է ոչ թե որպես ինքնուրույն օգտակար, այլ՝ որպես փոխաբերություն կարատեի հոգևոր կողմը հասկանալու համար, հոգևորը այստեղ, որպես կյանքի միկրոտիեզերք, ավելին է, քան սպորտը:

Կարատեի ազգային դաստարակչական համակարգի կարևորությունը

Յուրաքանչյուր անձ ունի արժեքների հերարխիա, որի գագաթնակետը իր ամենաբարձր բարիքն է՝ («summum bonum» - ը (բարձրագույն բարիք -լատիներեն արտահայտություն է, որը նշանակում է ամենաբարձր կամ վերջնական բարիքը, որը ներկայացվել է հռոմեացի փիլիսոփա Ցիցերոնի կողմից): Հայ մադու համար «summum bonum» -ը պետք է լինի հավատքը առ Աստված՝ որպես բոլոր արժեքների բարձրակետ և հոգևորության աղբյուր, որով պետք է սնել բոլոր գիտակցված դատողությունների և որոշումների հիմքը, հետևաբար, նաև բոլոր նպատակների և գործողությունների հիմքը, որովհետև դա է բնորոշ հատկությունը և էությունը հայի ինքնությանը: Ցանկացած գործողություն, որը հիմնված է նույնիսկ ամենաթեթև մտորումների վրա՝ լավի կամ վատի, ճիշտ կամ սխալի, պայմանավորված կոնկրետ անձի գնահատման չափանիշներով, կողմնորոշվելու համար անհրաժեշտ է, որ նա գի-

տակցված հղում կատարի իր համոզմունքներին, թեև պետք է նկատել, որ որոշ գործողություններ կարող են լինել ռեֆլեքսային կամ բնազդային, հետևաբար, խոսքը այստեղ ամենևին էլ չի կարող վերաբերվել, նրանց համոզմունքային պատկանելիությանը: Կարատեում պետք է ձևավորել հոգևոր դաստիարակչական ազգային համակարգ, որը կծառայի հոգևոր առաքելություններով զինված ֆիզիկական, հուզական, հոգևոր և մտավոր ներուժով օժտված անհատականությունների ձևավորմանը: Այն պետք է հիմնված լինի քրիստոնեական կենդանի հավատքով և նրանով արտահայտված ազգային արժեքներով, որոնց կողավորմամբ պետք է իմաստավորել հայ մարդու ինքնությունը և նրա առաքելությունը այս կյանքում: Հոգևորության վրա հիմնված կարատեի դաստարակչական ազգային մոդելը հայ կարատեիստների համար հնարավորություններ կընձեռի նրանց գոյության փիլիսոփայության վեհացմանը և կյանքի վերաիմաստավորմանը: Այդպիսի հավատը բերում է շնորհի, ներքին ուժերի և կարողությունների ծաղկման, իր տեսակի արժեվորման և կյանքը ճիշտ գնահատելու կարողության: Առաջարկված մեր համակարգի հուսալիությունը պետք է դիտարկել ճշմարիտ հավատքի և գիտելիքի միջև վճռորոշ կապով և հայկական ինքնության իմաստավորմամբ Համակարգը պետք է ունենա այն ֆիլտրը, որով կզտվեն և ճանաչողական

գիտելիքներով կկողավորվեն այն ածանցյալ արժեքներն ու գաղափարախոսությունները, որոնք սնվում են մեր հավատքից՝ դրանով իսկ ամրագրվելով մեր հոգևոր նկարագիրը: Հոգևոր այդ գիտակցումը պետք է պարզեցնի մեր որոշումների կայացումն սկզբունքային մոտեցումները՝ նվազեցնելով կամ վերացնելով մեր մտավոր և հոգևոր ջանքերը, որոնք ներգրավված են կյանքի իմաստային փնտրումների և աշխարհի ըմբռնման բարդ փոխգործակցությունների առատության մեջ: Առաջարկված մոդելի նշանակությունը քրիստոնեության կիրառումը չէ հանուն նպատակների, այլ այդ նպատակներն է պետք իրագործել հանուն քրիստոնեական և ազգային արժեքների:

Եզրակացություն: Ազգը՝ որպես հոգեղեն ուժ, պարզապես հավաքական հավատք է, իսկ հայ ազգի հավաքականության և փրկության ուղին՝ հասարակության եկեղեցիացման ճանապարհը: Եկեղեցին մեզ դարերով միավորել է, կրթել ու զորացրել է՝ դարձնելով մեզ ազգ եւ Աստծո ժողովուրդ: Այս առումով Հայ Եկեղեցին մեր ինքնության և հոգևոր արժեքների ինստիտուցիոնալ պահապանն ու երաշխավորն է, ինչպես նաև Աստծո սիրո և մեր փրկության ճանապարհը լուսավորող հաստատությունը մեր

ազգային կյանքում: Այսպիսի ամրագրումը մեր համոզմունքների մեջ մեզ կձևավորի որպես պատմության մասնակիցներ և ապագան կերտող ժողովուրդ՝ մեր կյանքը դարձնելով թռիչքների և հաղթանակների ճշմարիտ հարթակ, իսկ կարատեստների ազգային դաստիարակության պատկերում բարձրագույն արժեքների առաքինի զգացողությունները, որը սնում է հավատքը, կմիախառնվի նրանց վերաբերմունքին և գործողություններին՝ առաջ մղելով դեպի սպորտային նվիրական բարձունքներ:

Հայերիս համար Քրիստոնեական հավատքը մեր հոգևոր ազատագրման միակ ճանապարհն է և մեր կյանքի արժեքային հիմքը, իսկ կարատեստի և այլադավան այլ մարարվեստների սերմանած հոգևորության պանդխտությունից ազատագրվելու և հայ կարատեստի ինքնությունը իմաստավորելու միակ ճանապարհը կարատեն որպես մարզաձև ուսուցանելն է և վերադարձը դեպի ազգային արմատներ և եկեղեցի, որն իր անվանման մեջ առաքելական շեշտադրումով աշխարհին մեզ ներկայացնում ենք որպես առաքելական ազգ, որը ոչ միայն հոգևոր ծագումնաբանություն է, այլև կենդանի առաքելություն և ճշմարտության ճանապարհ, առանց այլաբանությամբ և հայկական ինքնությամբ:

📖 ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Andres, Sean (2014). 101 Things Everyone Should Know about Theodore Roosevelt. Adams Media. pp. 31–32. ISBN 978-1440573576.:
2. Designing the Pattern of Spiritual Leadership Based on Islamic Values: Research Based on Grounded Theory Method with an Emphasis on the Characteristics of the Guard Commander, Major General Shahid Ahmad Kazemi/ Authors.Mesbah Alhoda Bagheri Kani, Hasan Sa'adabadi,Publication date 2011/9/23 Journal Strategic Management Thought, Issue 2, Pages 57-122, Publisher Imam Sadiq University:
3. Georg Wilhelm Friedrich Hegel: The Phenomenology of Spirit Georg Wilhelm Fredrich Hegel Edited and translated by Terry Pinkard, Michael Baur Published online: 12 February 2018Print publication: 22 February 2018:
4. Hill, P. C., Pargament, K. I., Hood, R. W., McCullough, M. E., Swyers, J. P., Larson, D. B., et al. (2000).:
5. Jihad What Everyone Needs to Know, By: Asma Afsaruddin, Series: What Everyone Needs to Know 240 Pages, PAPERBACK ISBN: 9780190647322, Published By: Oxford University Press, Published: March 2022:
6. Judaism: A Very Short Introduction (Very Short Introductions): Norman Solomon: Published by Oxford University Press (2014): ISBN 10: 0199687358, ISBN 13: 9780199687350
7. Pargament KI (2007) Spiritually integrated psychotherapy: Understanding and addressing the sacred New York: Guilford. 384 p.:
8. Stephen R. Covey (Author) The 7 Habits of Highly Effective People: Powerful Lessons in Personal Change Paperback – Special Edition, November 19, 2013 by :
9. The Essential Writings of Abraham Isaac Kook Paperback – April 1, 2006 / by Abraham Isaac Kook (Author), Ben Zion Bokser (Editor, Translator) :
10. The Competitive Buddha: Author Jerry Lynch Published Tantor Media, Inc., 2021.
11. **Tao Te Ching Laozi: Publisher : CreateSpace Independent Publishing Platform (July 12, 2016) ISBN-10 : 1535229330, ISBN-13 : 978-1535229333:**

**RELIGION AND SPIRITUALITY IN SPORTS AND IN KARATE-DO:
NATIONAL EDUCATION IN THIS CONTEXT**

*A.S. Gharakhanyan
Armenian State Institute of Physical Culture
and Sport, Yerevan, Armenia*

ABSTRACT

Keywords: spirituality, religion, sports, culture, spiritual aspiration, faith, national karate training system, ideology, values.

Research relevance: The term "spirituality" should be considered as an ideological concept of contemporary education. It is a mental concept that plays a crucial role in lifestyle choices. Spirituality is a powerful force that, both in life and in sports, can drive a person forward toward higher goals, the main source of which is religion. Spirituality presupposes cultural and religious affiliation, which is expressed in karate do with its religious and philosophical views and ideas. Therefore, without having a national karate education system, such religious and philosophical views perspectives may deprive Armenian athletes of their national identity and spiritual affiliation.

Research aim and objectives: Considering Christian faith and ideals, to identify and emphasize the high athletic achievements of Armenian karate sportsmen and the achievement of spiritual truth as an expression of Armenian spirituality and identity.

The research problems are:

1. To develop attitudes towards a number of religions and confessional views among Armenian karatekas through face-to-face psychological research.
2. To consider Christian spirituality as the main guide for the activities of Armenian karatekas.
3. To establish essential concepts for a national classification system in karate.

Research methods and organization: The following research methods were used: the study and analysis of scientific and methodological literature, pedagogical observations, and conversation.

Research result analysis: Assessing the historical course of sports activity, we understand that in ancient civilizations it was implemented within the framework of cult practice and was part of the sacred tradition of that time.

We will not be disappointed if we say that the most influential and effective way to reveal person's inner abilities in practice was spirituality, which was based on religion and faith,

since ancient times Spirituality in sports has been invisible and powerful, power that encircles the sportsman and propels him forward with faith in victory.

Conclusion: The nation as a spiritual power is simply a collective faith, and the path of collectivity and salvation of the Armenian nation is the path of the churchification of society. Over the centuries, the Church has united us, educated and strengthened us, making us a nation and God's people . In this sense, the Armenian Church is the institutional guardian and guarantor of our identity and spiritual values, as well as an institution that illuminates the path of God's love and our salvation in our national life. Such a focus in our beliefs will shape us as participants in history and as people building the future, making our lives a real platform for jumps and victories, and in the image of the national karate team, virtuous feelings of higher values, nourished by faith, will mix with their views and actions, striving for sporting heights.

РЕЛИГИЯ И ДУХОВНОСТЬ В СПОРТЕ И КАРАТЕ-ДО И НАЦИОНАЛЬНОЕ ВОСПИТАНИЕ В ЭТОМ КОНТЕКСТЕ

А. С. Караханян

*Государственный институт физической культуры
и спорта Армении, Ереван, Армения*

АННОТАЦИЯ

Ключевые слова: духовность, религия, спорт, культура, духовное стремление, вера, национальная система тренировок по каратэ, идеология, ценности.

Актуальность исследования. Термин «духовность» следует рассматривать как идеологическую концепцию современного образования. Это ментальная концепция, которая играет решающую роль в жизненном выборе. Духовность – это мощная сила, которая в жизни, как и в спорте, способна подтолкнуть человека вперед к высшим целям, главным источником которых является религия. Духовность предполагает культурно-религиозную принадлежность, что выражается и в карате-до с его религиозно-философскими взглядами и идеями. Поэтому, не имея национальной системы образования в каратэ, подобные религиозно-философские взгляды могут лишить армянских спортсменов национальной идентичности и духовной принадлежности.

Цель исследования: Определить и подчеркнуть, с учетом христианской веры и идеалов, высокие спортивные результаты армянских спортсменов-каратеистов и достижение духовной истины как выражения армянской духовности и самобытности.

Проблемами исследования являются:

1. Формировать отношение к ряду религий и конфессиональных взглядов у армянских каратеистов посредством очного психологического исследования.
2. Считать христианскую духовность основным руководством деятельности армянских каратеистов.
3. Сформировать необходимые представления о национальной классификационной системе каратэ.

Методы и организация исследования: Использовались следующие методы исследования: изучение и анализ научно-методической литературы, педагогические наблюдения, беседа.

Анализ результатов исследования: Оценивая исторический ход спортивной деятельности, мы понимаем, что в древних цивилизациях она реализовывалась в рамках культовой практики и была частью священной традиции того времени.

Мы не разочаруемся, если скажем, что наиболее влиятельным и эффективным способом раскрытия внутренних способностей человека на практике была духовность, основой которой были религия и вера. Духовность в спорте является невидимым и могущественным; сила, которая опоясывает спортсмена и продвигает его вперед с верой в победу.

Краткие выводы: Нация как духовная сила – это просто коллективная вера, а путь коллективности и спасения армянской нации – это путь воцерковления общества. Церковь на протяжении веков объединяла нас, воспитывала и укрепляла, делая нас нацией и народом Божиим. В этом смысле Армянская Церковь является институциональным хранителем и гарантом нашей идентичности и духовных ценностей, а также институтом, освещающим путь Божьей любви и нашего спасения в нашей национальной жизни. Такая фиксация в наших убеждениях сформирует нас как участников истории и народа, строящего будущее, сделав нашу жизнь настоящей площадкой для скачков и побед, а в образе национальной сборной по каратэ – добродетельных чувств высших ценностей, питаемые верой, будут смешиваться с их взглядами и действиями, стремясь к спортивным вершинам.

Information about the author

Arman Sarkis Gharakhanyan, Associate Professor of the Chair of Wrestling and Oriental Sports, Armenian State Institute of Physical Culture and Sport, Yerevan, Armenia, E.e-mail: arman.karakhanyan@sportedu.am

Տեղեկություններ հեղինակի մասին

Արման Սարգսի Ղարախանյան՝ Ըմբշամարտի և արևելյան մարզաձևերի ամբիոնի դոցենտ, Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ, Երևան, Հայաստան, E.mail: arman.karakhanyan@sportedu.am

Հոդվածն ընդունվել է 28.10.2024-ին:

Ուղարկվել է գրախոսման՝ 29.10.2024-ին:

Գրախոս՝ հ.գ.թ., դոցենտ Վ. Գեղամյան